

Ս. ԷԼՈՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՄԻՋԱԾԱՆՑՆԵՐԸ

Ժամանակակից հայերենը ընդհանրապես շատ քիչ թվով միջաժանցներ ունի, իսկ եղած միջաժանցների մի մասն էլ, ըստ կիրառության, մեռած, քարացած աժանցներ են:

Հայ լեզվաբանության մեջ իբրև միջաժանցավոր կազմություններ հիշատակվել են միայն հատուկենտ բառեր, որոնցից են՝ պոկել-պոկել, բնդել-բնդել կամ բլնդորել և սուր-սուլորիկ, կծել-կրծել¹, Ոչ ճիշտ կերպով միջաժանցավոր բառ է դիտվել նաև «կլոր»² կազմությունը: Սակայն այս բառի մասին կա նաև ավելի հավաստի ստուգաբանություն, ըստ որի «կլոր» բառի արմատն է կիլ-գիլ և աժանցն է «որ» (հմմտ. բոլոր, հատոր, մոլոր, ցնոր և այլն), հետևաբար, այս կազմության մեջ աժանցն է «որ» և ոչ թե արմատի «լ» բաղադրիչը: Որքան էլ միջաժանցումը իբրև բառակազմական միջոց յուրահատուկ չէ արդի հայերենի համար, այնուամենայնիվ, արդի հայերենը, բացի վերահիշյալից, ունի նաև որոշ թվով միջաժանցներ, որոնց աժանցական նշանակությունը այժմ էլ գիտակցվում է:

Արդի հայերենի գիտակցվող միջաժանցներից են.

1) Լ.—Այս աժանցին մենք հանդիպում ենք հայերենի «լիկ», «լան», «լուկ» բաղադրյալ աժանցների կազմության մեջ. ինչպես՝ թխլիկ, հաստլիկ, նեղլիկ, շեկլիկ, խաբլան, կուզլան, «վախլուկ» և այլն: Հիշյալ բառերի «լ» և «հեկոնալ», «հաստոնիկ» և այլ բառերի «ո» աժանցական հնչյունների առաջացումը Գ. Ղափանցյանը համարում է պատահական հնչյունական հավելման արդյունք³: Սա-

¹ Տե՛ս Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, էջ 208:

² Նույն աեղում:

³ Հ. Ահաթյան, Արմատական բառարան, հ. 2, էջ 190, 1914:

⁴ Տե՛ս Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, էջ 207:

կայն սրանք ծագումով բնածախական բառերի լաւ և առաւ աստուկացուցիչ բաղադրական տարրերն են (հմտ. կոնշալ, մոնշալ, ճտ-ճլրտ, քթ-քլրթ), որոնք երանգավորող բաղադրական ածանցների դեր են կատարել, կազմել բնածախական արմատներ և նմանակութեան օրենքի շնորհիւ անցել նաեւ ոչ բնածախական բառերին: Հետեւաբար, լաւ և առաւ երանգավորող միջածանցները ծագումով կապվում են բնածախական բառերի համանուն ածանցների հետ: Հայոց լեզվի խոշոր տեսաբան պրոֆ. Գ. Սեւակը որոշ կազմութիւններում (ճանկուկ, սկուկ և ալլն) մերժում է այս հնչյուններն ընդունել իրրւ ածանց (աժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955):

Այն-ն երանգավորող միջածանց է հետեւյալ կազմութիւններում:

ա) Վկանչ կազմութեան մեջ լաւ միջածանցը բնածախական Վկանչ բառի համեմատութեամբ նոր բառ է կազմել. բնածախական Վկանչ ավելի ընդհանրական նշանակութիւն ունեցող կազմութեանը հազորգելով ավելի նեղ, կոնկրետ իմաստ՝ կենդանու կամ շան ձայն հիշեցնող կանչ՝ կլանչ (միաժամանակ ածանցավոր արմատի իմաստին հաղորդելով տեղականութեան երանգ): Վկանչ բառի սկզբնական արմատը եղել է Վկ բաղաձայնը, իսկ Վն, Վչ բնածախական աստուկացուցիչ ածանցները հետո են կուտակվել և կազմել Վկանչ արմատը, ուստի, քանի որ Վկանչ համաձուլը այժմ դիտվում է իբրեւ պարզ արմատ, ապա լաւ միջածանցը (թեւեւ նույնպէս սկզբնապիս բնածախական բաղադրական ածանց էր) Վկանչ կազմութեան մեջ դիտվում է իբրեւ բառակազմական ածանց: Կարճ ասած՝ այս-անդ, ինչպէս և ստորեւ բերված բնածախական մի շարք այլ բառերի մեջ, լաւ-ն միջածանց է, որոշ հարաբերական իմաստով:

բ) Վն հնչյունի ածանցական նշանակութիւնը գիտակցվում է նաեւ մի շարք այլ բնածախական բառերում. օրինակ՝ քթ-քլրթ, պտ-պլրտ, պստ-պլրստ, ճտ-ճլրտ, ճստ-ճլրստ, շմի-չլրմի և ալլն:

Գոցենտ Ա. Աբրահամյանը հիշյալ բնածախական բառերի լաւ, ինչպէս և թրբիսկ, շրբիսկ, չրբիսկ և ալլ նման բառերի լաւ || առաւ հնչյունները ծագումնաբանորեն բնածախական բառերի աստուկացուցիչ տարրեր համարելով, դիտում է նաեւ իբրեւ յուրահատուկ բառակազմական ածանցներ¹:

գ) Հավանաբար միջածանցման օրինակ ունենք նաեւ խլրտալ (խլրտոց, խլրտոյն) կազմութեան մեջ, որտեղ լաւ միջածանցի շնոր-

¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայական կրկնավոր բառերը ժամանակակից հայերենում, ՉՍՍՌ ԳԱ, Հաս. գիտութիւնների «Տեղեկագիր», 1959 թ., № 4, էջ 53:

իվ խորտանել» բայի արմատի (խիրտ) վախճանալու, փախչելու իմաստը փոխվել է՝ «կամացուկ շարժվելու, երեքալու իմաստի»:

դ) Նույն երևույթը կարող ենք դիտել նաև «պլշել» կազմության մեջ: Այստեղ «լ»-ն միջածանց կարելի է համարել «պիշ» (հառած աչքերով նայել, որից և «պշնուլ», «ակնապիշ») արմատից, որին «լ» ածանցը հազորդել է գործողության սաստկության, տեղականության երանգ՝ «պլշել», «պլշած», այսինքն ավելի լայն բացված, հառած, շոտած աչքերով նայել:

2. Բ-ն երանգավորող միջածանց է հետևյալ կազմություններում:

ա) Մտնելով «կծել» բայարմատի կազմության մեջ կազմել է «կրծել» (բարբառներում՝ «կռծել») բայը, որտեղ Բ || Ռ միջածանցը «կծել» բայի գործողությանը սաստկության և տեղականության իմաստ է հազորդել, միաժամանակ ստեղծելով նոր սկզբնաձև:

բ) Մի շարք բնաձայնական բառերի մեջ, ինչպես՝ դրխկալ, դրմփալ, զրխկալ, զրմփալ, թրխկալ, թրմփալ, շրխկալ, շրմփալ, ինչպես նաև՝ ճրտալ (բարբառներում — ճշալ, ճղճղալ) և այլն, «բ»-ն երանգավորող միջածանցի նշանակություն ունի: Բերված բոլոր կազմությունների համար ընդհանուր թրխկալ, թրմփալ հնչյունախմբերի «բ» հնչյունը միանալով բնության ձայնների նմանվող արմատ-հնչյուններին (դ, զ, թ, շ, ճ), սկզբնապես սաստկացուցիչ բաղադրական մասնիկի դեր է կատարել և կազմել «դրխկալ», «թրխկալ», «շրխկալ» և այլ արմատները: Հետագայում իբրև առանձին բնաձայնական արմատներ են գիտակցվել նաև «դխկալ», «զմփալ», «գխկալ», «զմփալ», «թխկալ», «թմփալ», «շխկալ» և այլ կազմությունները, որոնց մեջ հանդես եկող «բ» հնչյունը այժմ գիտակցվում է իբրև երանգավորող միջածանց:

3) Բ-ն երանգավորող միջածանց է նաև «տրոփել» կազմության մեջ: Արմատն է «տփել» (ծծել, խփել, հարվածել), որը հավանաբար բնաձայնական ծագում ունի: Այս ձևը արդի հայերենի գրական լեզվում գործածական չէ, այն պահպանված է բարբառներում և այժմ էլ վեհաստեղծ է «ծծել, խփել» նշանակությամբ: Գրական լեզվին համեմատաբար ավելի մոտ է հիշյալ բառի կրկնավոր ձևը՝ «տփտփել», որ նշանակում է թեթևակի հարվածել, թակել, թրխկացնել: Հիշյալ «տփել» բնաձայնական արմատից «բ» միջածանցմամբ ծագել է «տրոփել» սկզբնաձևը, որտեղ «բ» միջածանցը ածանցվող բառի իմաստին հազորդել է սաստկության, տեղականության իմաստ, միաժամանակ ստեղծելով նոր բառակազմական միավոր (մի բան, որ հատուկ է միայն բուն բառակազմական ածանցներին): Այստեղ,

«սփիւն» բնածայնական արմատի «ծեծելու, խփելու» իմաստը վերածվել է սրտի, ոտքի, սմբակների զգարկը, բախշունը՝ նշանակող իմաստների. ինչպես. օրինակ՝ սրտատրոփ (սրտի բաբախունը), քառատրոփ (ձիու սմբակների դոփշունը), ոտնատրոփ (ոտքերի շարժման ձայնը) և այլն:

Բարրառեցներում հիշյալ ձևը կենսունակ է «տրըպպալ» ձևով, որը մասամբ գործ է ածվում նաև գրական լեզվում (Հերիքնազի շունը հազիվ էր վրան տրպպում)¹:

Պրոֆ. Հ. Աճառյանը «տրոփել»² կազմութունը դիտել է որպես չստուգաբանված և ոչ բնածայնական ծագում ունեցող բառ:

զ) Ռ-ն երանգավորող միջածանց է հետևյալ կազմութիւններում. օրինակ՝ բաշել—բառաշել, փշտալ—փռշտալ, փնշալ—փռնշալ, շաշել—շառաշել և այլն:

Բերված կազմութիւններում «ռ» ածանցը միանալով բնածայնական «բ, փ, շ» հնչյուններին (որոնք ծառայել են իբրև արմատներ)³ և նրանց բաղադրական «նշ, շտ, շ» ածանցներին, նույնպես սկզբնապես բաղադրական նշանակութուն է ունեցել, և այժմ, երբ առանձին ձևով գիտակցվում են նաև «փշտալ», «փնշալ», «շաշել» բառերը, նրանց «ռ» ածանցով բաղադրված ձևերի մեջ «ռ»-ն գիտակցվում է իբրև երանգավորող միջածանց:

դ) Զ.—միջածանցը դրվելով «ճմել» (ծանրության տակ թեքել, սեղմել, ճնշել) կազմության մեջ, ստեղծել է «ճզմել» կազմութունը, որտեղ «զ» ածանցի շնորհիվ ածանցվող բառի գործողությանը ուժգնութիւն և սաստկութիւն երանգ է հաղորդվել:

Մինչև այժմ բերված միջածանցներից գրեթե բոլորը գիտակցվող և կենսունակ ածանցներ են: Սակայն մեր լեզվում կան և չգիտակցվող, խիստ քարացած միջածանցներ, որոնք ծագել են մեր լեզվի զարգացման ամենահնագույն շրջաններում և իրենց առաջացման օրից իսկ քարացել են և դարձել մեռած կազմութիւններ: Այսպիսի ածանցները այլևս չեն գիտակցվում և նրանցով ածանցված բառերի կամ արմատների ստուգաբանութիւնը միայն կարելի է պարզել նրանց միջածանց լինելը:

Պրոֆ. Գ. Ղափանցյանը իր «Ընդհանուր լեզվաբանութիւն» աշխատութիւնի մեջ բերում է գրաբարի ներսում կատարված միջածանցման օրինակներ. այսպես, գրաբարյան «արտաւար» բառի մեջ

¹ Ան. Սահեյան, Ծարավ, Երևան, 1955, էջ 445:

² Հր. Աճառյան, Արժատական բառարան, հ. 6, էջ 1014:

³ Տե՛ս Հ. Աճառյան, «Շանդէս» ժամանակ, 1899, հուլիս-օգոստոս, էջ 205:

«(w)» ձախորդը միջածանց է, քանի որ հիշյալ բառերի հնագույն արմատում այն գոյություն չի ունեցել և հետո է միայն ավելացել:

Հնդեվրոպական հիմք լեզվում հիշյալ բառի արմատը եղել է artasu (հմմտ. հին լատիներեն dacruma, լատիներեն lacrima հունարեն ὄαρυ = արտասուք), Այնուհետև այս առ միջածանց հնչյունը սկսում է որոշ կենսունակություն ձեռք բերել նաև բայերի մեջ. այն մի շարք բայերից ստեղծում է գոյական անուններ. օրինակ՝ ծանաչել > ծանալթ (ծանօթ), ամաչել > ամալթ — ամօթ — ամոթ. աղաչել > աղալթ — աղօթ — աղոթ, արածել — արաւտ — արօտ — արոտ¹, Այստեղ միջածանցման հետ տեղի է ունեցել նաև աֆրիկատների պարզեցում (աշ և աս հնչյունների սղումով), Նույն երևույթն է տեղի ունեցել նաև մատչիմ — մաւտ (մոտ), հետում — հեւ — հիւս (հյուս), թանամ — թաւն (թոն) կազմություններում:

Վերահիշյալ բառերի հետ պրոֆ. Գ. Ղափանցյանը առ միջածանցավոր բառ է համարում նաև հայերենի առեւծ (առյուծ)² բառը, այն կապելով հնդեվրոպական լեզուների rex (լատիներեն թագավոր, reg = կառավարիչ, սանսկրիտերեն rāja = թագավոր) ձևերի հետ, սրոնց մեջ առ հնչյունը բացակայում է (առեւծ — rex): Սակայն «առեւծ» բառի ծագման մասին ավելի նախընտրելի է պրոֆ. Հ. Աճառյանի տված ստուգաբանությունը, ըստ որի «առեւծ» ծագել է հնդեվրոպական նախալեզվի reug = մոնչալ ձևից (հմմտ. լատիներեն rūgio = մոնչալ, կելտերեն rucht)³, Այս դեպքում արդեն հայերեն «առեւծ» արմատը թե ձևով և թե իմաստով համապատասխանում է հնդեվրոպական լեզուների համանուն արմատի հետ (ռեւծ — reug, rūgio), հետևաբար այստեղ առ (w) միջածանցի մասին խոսք լինել չի կարող:

Նշված բոլոր օրինակներում առ միջածանցը այլևս չի գիտակցվում, այն դեռևս գրաբարյան շրջանում մտել էր նշված արմատների բազադրության մեջ և վերածվել քարացած բազադրական միջածանցի:

Այսպիսով, որքան էլ միջածանցումը այնպիսի կենսունակ երեվույթ չէ արդի հայերենի բառակազմության համար, ինչպես նախածանցումը և վերջածանցումը, այնուամենայնիվ, միջածանցման շնորհիվ ևս (ինչպես վերևում տեսանք) ստեղծվել են ոչ միայն բա-

¹ Տե՛ս Գ. Ղափանցյան, Հնդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939 թ., էջ 208:

² Տե՛ս նույն աղբյուր:

³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 1, Երևան, 1940, էջ 39:

ռակազմական նոր միավորներ, այլև մի շարք սկզբնաձևեր. *ինչպես* (իսիրտ), *կլանչել* (կանչ), *կրծել* (կծել), *պլոկել* (պոկել), *պլշել* (պիշ), *տրոփել* (տփել—տփտփել) և այլն:

Դիսկալ—դրիսկալ, դրմփալ, թիսկալ—թրիսկալ—թրմփալ, զրիկալ—զրիսկալ—զրմփալ, շիսկալ—շրիսկալ, շրմփալ—շաշել—շառաշել, փնշալ—փոնշալ, ճմել—ճզմել, ճըտալ—ճրըտալ, ճլըտալ. պըտ—պլրտ, քթ—քլըթ և այլ կազմություններում «լ», «ր» և «դ» միջաժանցները իրենց երանգավորող նշանակության (գործողության, սաստկության, տեականության) հետ մեկտեղ, ունեն նաև բառակազմական նշանակություն: Հետևաբար, երանգավորող միջաժանցները իրենց աժանցային նշանակությամբ մի կողմից մոտենում են բայական երանգավորող (ատ, ոտ, կոտ, տ) աժանցների նշանակությանը, իսկ մյուս կողմից՝ բառակազմական աժանցների (ական, ային, ություն) նշանակությանը:

Միջաժանցները ևս, *ինչպես* և մյուս բառակազմական աժանցները, ստեղծել են մի շարք բառական նոր արժեքներ, որոնք մտել են մեր լեզվի բառային կազմի մեջ:

Իրրև միջաժանց հանգես են եկել հայերենի գերազանցապես ձայնորդ հնչյունները (լ, ր, ու) և այն էլ մեծ մասամբ բնաձայնական բառերի կազմության մեջ:

С. ЭЛОЯН

ИНФИКСЫ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Р е з ю м е

В армянской лингвистической литературе упоминаются только следующие инфиксированные слова: *րնդել*—*րլնդել*, *րլնդորել*, *կծել*—*կըծել*, *պոկել*—*պլոկել*, *սուր*—*սուլուրիկ*.

Автор приводит также ряд других фактов, когда при помощи инфиксов сложились новые словообразовательные формы. Так, например, при помощи инфиксов—«л» и «р» основы *իւրտ(նել)* (*իսիրտ*), *կանչ*, *պիշ*, *պստ(ալ)*, *տփ(ել)* образовали *իւրտալ*=плескаться, *կլանչ*=тявкание, *պլշել*=устанавливаться глазами, *պլտտալ*=споткнуться, *տրոփել*, *տրըպպալ* инфиксированные формы.

а) инфикс «г». В ряде армянских звукоподражательных слов: как например, *цгцг—цгцгцг*, *цгццг—цгццгцг*, *згзг—згзгзг*, *згзцг—згзцгцг* и т. д. (л) рассматривается как отеняющий инфикс;

в) «л» оттеняющий инфикс в словах $лшлшл_л(лшл_л) =$ бляеть, $лшлшл_л(лшл_л) =$ лязгать, $лшлшл_л(лшл_л) =$ чихнуть, $лшлшл_л(лшл_л) =$ фыркать, $лшлшл_л(лшл_л) =$ мычать и в ряде других образований.

г) из формы $\langle \delta \lambda h_l \rangle$ при помощи инфикса $\langle q \rangle$ образовалась $\delta q \lambda h_l$, где через инфикс $\langle q \rangle$ действию $\delta \lambda h_l = \langle \text{прессовать} \rangle$ придается оттенок продолжительности и учащённости ($\delta q \lambda h_l$).

Как инфиксы выступали, главным образом, армянские сонанты, которые в большинстве случаев участвовали в образовании звукоподражательных слов.